



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 9 ՌԵԿՏԵՄԲԵՐ, 2019

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս յիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 106:34-38

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻԻՆԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՆԴԵՊ

Չբնաջնջեցին Քանաան ապրող ժողովուրդները, ինչպէս Տէրը ըսած էր իրենց, այլ՝ անբարոյ կենակցութիւն ունեցան հեթանոսներուն հետ, եւ անոնց բարքերը որդեգրեցին: Անոնք կուռքերուն պաշտամունքին նուիրուեցան, ինչ որ իրենց կործանումին պատճառ եղաւ: Իրենց տղաներն ու աղջիկները դեւերուն գոհ ընծայեցին: Անմեղ արիւն թափեցին, արիւնը իրենց իսկ տղաներուն եւ աղջիկներուն, որոնք իբրեւ գոհ ընծայեցին Քանաանին մէջ պաշտուող կուռքերուն. եւ երկիրը արիւնով պղծուեցաւ: Ուստի Տիրոջ բարկութիւնը բորբոքեցաւ իր ժողովուրդին դէմ, զգուեցաւ իր սեփական ժողովուրդէն: Զանոնք հեթանոս ազգերու ձեռքը յանձնեց, եւ գիրենք ապողները իրենց վրայ իշխեցին: Բազմաթիւ անգամներ Տէրը զանոնք ազատեց, սակայն անոնք կամաւորաբար ըմբոստանացան անոր դէմ, եւ յամառօրէն շարունակեցին մնալ իրենց անօրէնութեան մէջ: Բայց Տէրը տեսաւ անոնց նեղութիւնը, լսեց անոնց աղաչանքը, յիշեց անոնց հետ կնքած իր ուխտը, եւ փոխեց իր մտադրութիւնը, որովհետեւ անսահման է իր սէրը: Զանոնք գերութեան փանողներուն սրտին մէջ գութ դրաւ անոնց հանդէպ: Փրկէ՛ մեզ, ո՛վ Տէր, մեր Աստուածը, հեթանոս ազգերուն մէջէն մեզ վերապին մէկտեղէ, որպէսզի քու սուրբ անունիդ գոհութիւն յայտնենք, եւ քեզ օրհներգելը ըլլայ մեր պարծանքը: Օրհնեալ է Տէրը, Աստուածը իր ժողովուրդին, յաւիտեանէ մինչեւ յաւիտեան: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ- ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Վմենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղեցոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հոովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺԹԸ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՄ ԵՐԵՄԻԱՅԻ

19 ԳԼՈՒԽ

ԿՈՏՐԱԾ ԿՈՒԺԸ (19:1-15)

Եթե անցեալ անգամ Տէրը Երեմիան դրկեց բրուպին փունը, որպէսզի անով ցոյց փար Աստուծոյ վերաբերմունքը Իր ժողովուրդին հետ, ժողովուրդին վերաբերմունքը Աստուծոյ հետ, եւ իբրեւ հետեւանք գալիք պատուհասները այս ժողովուրդին վրայ: Այս անգամ Տէրը մէկ այլ ուրիշ պատգամ մը կը փոխանցէ մարգարէին ըսելով. «**Գնա՛, բրուպի շինած հողէ կուժ մը ծախու առ ու ժողովուրդէն քանի մը ծերեր եւ քահանաներէն քանի մը ծերեր քեզի հետ առ, եւ գնա՛ Ենովմի որդիին ձորը եւ հոն յայտնէ այն պատգամները որ Ես քեզի պիտի յայտնեմ**» (1-2 հմր): Հետաքրքրականօրէն, Աստուած կը թելադրէ մարգարէին, որ ծախու առնէ շինուած կուժ մը, եւ ոչ թէ փակաւին շինուելիք: Տարբերութիւնը այն է, որ շինուելիքը փակաւին ճախարակի վրայ է ու կրնայ նոր ձեւեր ու փեսքեր սրանալ, մինչ շինուածը արդէն եփուած ու կարծրացած է: Այնպէս ինչպէս Իսրայելի որդիներուն սիրտը կարծրացած: Վկայութեան համար քեզի հետ «**Ժողովուրդէն քանի մը ծերեր եւ քահանաներէն քանի մը ծերեր առ**», կը նշանակէ յայտնի, յարգուած, այլ խօսքով, ժողովուրդի ներկայացուցիչները: Եւ գնա՛ Ենովմի որդիին ձորը, որ հեթանոսական պաշտամունքի ամենեն ահաւոր ու սոսկալի փեղն է, ուր ոչ միայն պաշտամունքը կ'ընէին, այլ նաեւ իրենց գաւակները կը գոհէին կրակով. «**Բահաղին բարձր փեղեր շինեցին, որպէսզի իրենց փղաները կրակով այրեն**» (5 հմր): Այս իսկ պարճառով փեղը օտարացուցին, այսինքն՝ Աստուծոյ համար նուիրականացած փեղը, օտար աստուածներու փեղ պարտաւերցին, ինչպէս նաեւ այդ փեղերը անմեղ արիւնով լեցուցին (4 հմր), այսինքն՝ իրենց փղաքն ու աղջիկները կուռքերուն գոհեցին:

Օրեր պիտի գան, եւ այս փեղին անունը Սպանութեան ձոր պիտի կոչուի, ոչ որովհետեւ իրենց սպաննեցին, այլ՝ իրենք պիտի սպաննուին: Դաժան է դատաւարութիւնը, բայց նաեւ արդար: Որովհետեւ ինչ որ կը ցանես, պիտի հնձես: Երբ անոնք, իբրեւ գոհ, ընծայ, իրենց գաւակներուն արիւնը կը թափէին, այսինքն՝ կը գոհէին, որպէս հետեւանք, թշնամին պիտի յարձակի եւ իրենց արիւնը թափէ, այսինքն՝ կոտորէ (6-7 հմր): Առաւել եւս, այն քաղաքը, որ ծանօթ էր որպէս խոստացուած երկիր, մեղր ու կաթ բխեցնող, ահա աւերակ ու նախաքինքի առարկայ պիտի ըլլայ, ու անկէ անցնողը պիտի գարմանայ, թէ ինչ պատահեցաւ այս քաղաքին (8 հմր), ու պիտի սուլէ, գարմանքի արտայայտութիւն: Բ. Օրինաց 28:53, Մովսէս այս բոլորի մասին մարգարէացած էր արեւին, եւ այդ մարգարէութեան խօսքերը իրենք կը կարդային, եւ ճիշդ անոր համար է որ արձանագրուած էին, որպէսզի գալիք սերունդները լսէին ըստ այնմ զգուշութեամբ ապրելու: Բայց արդէն իրողութիւնը ցոյց կու փայ թէ անոնք որոնք պարտախանարու էին այս ժողովուրդը դատաւարակելու չէին կարարած իրենց պարտականութիւնը, իսկ ժողովուրդը մտիկ չէր ըրած առողջ եւ ուղիղ ուսուցումներուն: Պօղոս Առաքեալ նոյն արտայայտութիւնը ունի երբ կ'ըսէ. «*Այս բաները պատահեցան՝ իբրեւ օրինակ մեզի, որպէսզի չար բաներու չցանկանք, ինչպէն անոնք ցանկացին. եւ ոչ ալ կուռքեր պաշտենք, ինչպէս անոնցմէ ոմանք պաշտեցին*» (Ա Կորնթ 10:6-7): Իսկ իր աշակերտին նամակ գրելով պիտի ըսէ. «*Ժամանակ պիտի գայ, երբ մարդիկ ականջ պիտի չկախեն առողջ վարդապետութեան, այլ՝ իրենց սեփական ցանկութիւններուն համապարտախանող եւ զիրենք հաճոյացնող բաներու մասին խօսող ուսուցիչներ պիտի փնտրեն: Պիտի չուզեն ճշմարտութիւնը լսել, եւ առասպելներու ականջ փայլով պիտի կորսուին*» (Բ Տիմոթ 4:3-4): Ոչ միայն կոտորած, այլ նաեւ սով պիտի ըլլայ, եւ այնքան սաստիկ սով, որ մինչեւ իսկ պիտի սփայուին իրարու միս ուրբելու (9 հմր):

Եթէ Տէրը բրուպի նման Իր ձեռքին մէջ ունի կալը, որպէսզի ըստ այնմ շաղէ եւ անկէ կուժ շինէ, իսկ հիմա այդ շինուած կուժը պիտի կոտորէ, ինչպէս որ Երեմիան բրուպին քովէն բերած կուժը, ըստ Տիրոջ հրամանին իր հետ եղող մարդոց աչքին առջեւ կոտորեց (10-11 հմր): Հետաքրքրական է այս բաժինը երբ կը համեմատենք Սաղմոս 2:9ի հետ. «*Ձանոնք երկայթէ գաւազանով պիտի հովուես, կաւէ անօթի պէս պիտի փշրես զանոնք*»: Կը նշանակէ, թէ անոնք որոնք Երեմիայն հետ էին ու փեսան եղածը, ծանօթ էին այդ երեւոյթին, որովհետեւ անոնք գիտէին Սաղմոսներէն այն մարգարէական խոստումները կապուած Մեսիային, որ պիտի ըլլայ ազգերու թագաւորը, բայց այսպէղ երբեք պիտի չկարենային պարկերացնել, թէ իրենց մասին է խօսքը: Ահա ինչպէս որ Տոփեթի մէջ գոհեր կային, այնպէս ալ այս քաղաքին մէջ գոհեր պիտի ըլլան, այնքան շար, որ ալ թաղուելու փեղ պիտի չըլլայ եւ ամբողջ քաղաքը պիտի սպականի (12 հմր):

Հետաքրքրական է անցեալի փուններու շինուածքը, երբ փանիքները փաքակ կը շինէին, քանի մը նպատակներու համար, քալելու (Բ Թագ 11:2), «*Դաւիթ փանիք ելլելով կը քալեր երբ Բերասբէն փեսաւ*»: Կամ աղօթքի համար, «*Պեղոս փանիք ելաւ աղօթելու*» (Գործք 10:9): Ինչպէս նաեւ պաշտամունքի վայր. «*Փանիքներու վրայ երկինքի զօրքերուն եւ օտար աստուածներուն խունկ ծխեցին*» (13 հմր հմմտ Սոփոնիա 1:5): Այլ խօսքով, երկնային մարմիններու՝ արեւու, աստղերու պաշտամունք: